ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

0023, ք. Երևան, Արշակունյաց պող. 23, հեռ. (010)44-11-36, ֆաքս՝ (010) 58-15-74, էլ.կայք՝ justexpert.am

N 0125-2021

09 » 04 2021թ.

«ՏՐԱՆՍ-ՍՖԵՐ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ
ք. Երևան, Կ. Ուլնեցի 59/5, շին. 3

Հարգելի պարոն Պետրոսյան,

«Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Կենտրոն) և «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ի միջև 12.03.2021թ. կնքվել է անվտանգության (պահնորդական) ծառայությունների մատուցման գնման N ՀՀՓԿ-ԳՀԾՁԲ-01/21 պայմանագիրը, որի համաձայն Ձեր ընկերությունը պետք է անվտանգության ծառայություններ մատուցի Կենտրոնին՝ սույն պայմանագրի Հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների համաձայն:

Կենտրոնի կողմից Ձեզ ծանուցվել է ծառայությունը ՀՀ Կառավարության 29.01.2016թ. «Մասնավոր պահնորդական գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձանց աշխատակիցների կողմից օգտագործվող քաղաքացիական եվ ծառայողական զենքի տեսակը, ձևը, մոդելը և քանակը սահմանելու մասին» 57-Ն

որոշմամբ սահմանված զենքի տեսակով իրականացելու անհրաժեշտության մասին, սակայն ցայսօր դա չի կատարվել, մասնավորապես՝ պահնորդները 12.03.2021թ-ի դրությամբ առհասարակ չեն ունեցել զենք կրելու և օգտագործելու թույլտվություն, իրենց կցված զենք, ինչը չի համապատասխանում կողմերիս միջև կնքված ծառայությունների մատուցման գնման N ՀՀՓԿ-ԳՀԾՁԲ-01/21 պայմանագրի Հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներին: Ծանուցմամբ Պատվիրատուին տրվել է ողջամիտ ժամկետ՝ 5 աշխատանքային օր, խախտումները շտկելու համար, որի ավարտից հետո խախտումները չեն շտկվել, մասնավորապես՝ պահնորդները չունեն զենք կրելու և օգտագործելու թույլտվություն, որի արդյունքում ծառայությունը մատուցվում է առանց համապատասխան զենքի:

Միաժամանակ հայտնում ենք, որ Դուք Կենտրոնին չեք տրամադրել 12.03.2021թ-ին կնքված N ՀՀՓԿ-ԳՀԾՁԲ-01/21 պայմանագրի 2.1.5 կետի «1) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ չի ճանաչվել» և «3) չի դատապարտվել դիտավորյալ հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով մարված կամ հանված չէ» ենթակետերով սահմանված փաստաթղթերը՝ առ **19.03.2021թ-ի դրությամբ** (ՊՈԱԿ-ում անվտանգության (պահնորդական) գործառույթ իրականացնող անձանց վերաբերյալ), ինչի արդյունքում խախտվել է պայմանագրի նշված կետը (ներկայացվել են՝ 22.11.2019թ-ին Նվեր Հրանտիկի Հակոբյանին տրված պահնորդի որակավորման ստուգման վկայականը և «Կոմբատ» ՍՊԸ-ին 24.02.2020թ-ին տրված դատապարտված չլինելու և հետախուզման մեջ չգտնվելու մասին տեղեկանքը, 22.11.2019թ-ին Ռուբեն Կնյազի Սարգսյանին տրված պահնորդի որակավորման ստուգման վկայականը և 20.12.2019թ. ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի և ՀՀ ԱՆ «Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի տեղեկանքները, 01.09.2014թ-ին Սամվել Գարեգինի Մելիքյանին տրված պահնորդի որակավորման ստուգման վկայականը և «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ին 14.02.2020թ-ին տրված դատապարտված չլինելու և հետախուզման մեջ չգտնվելու մասին տեղեկանքը, 10.02.2020թ. ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի և ՀՀ ԱՆ «Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի տեղեկանքները, Ռոբերտ Գևորգի Ենգոյանին 10.12.2018թ-ին տրված պահնորդի

որակավորման ստուգման վկայականը և «Պատրիոտ» ՍՊԸ-ին 31.05.2019թ-ին տրված դատապարտված չլինելու և հետախուզման մեջ չգտնվելու մասին տեղեկանքը):

Համաձայն անվտանգության (պահնորդական) ծառայությունների մատուցման գնման N ՀՀՓԿ-ԳՀԾՁԲ-01/21 պայմանագրի 2.1.3 կետի՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:

Հիմք ընդունելով N ՀՀՓԿ-ԳՀԾՁԲ-01/21 պայմանագրի 2 կետի 2.1.3 (ա) ենթակետի և 5.2 կետի դրույթները կայացվել է որոշում.

1. Միակողմանի լուծել անվտանգության (պահնորդական) ծառայությունների մատուցման գնման N ՀՀՓԿ-ԳՀԾՁԲ-01/21 պայմանագիրը.
2. Պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու համար սահմանել տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0, 5% չափով, որը կազմում է՝ 34,050 դրամ, որը պայմանագրի 5.4 կետի համաձայն՝ կհաշվանցվի ծառայության մատուցելու արդյունքում կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

Սույնով տեղեկացնում ենք Ձեզ նաև, որ ղեկավարվելով Ձեր կողմից ներկայացված Տուժանքի մասին համաձայնագրի 1.3 կետի դրույթներով, N ՀՀՓԿ-ԳՀԾՁԲ-01/21 Պայմանագիրն ոչ պատշաճ կատարելու համար Կենտրոնը մտադիր է պահանջ ներկայացնել «Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ին՝ 681,000 ՀՀ դրամ գումար ստանալու վերաբերյալ:

Հարգանքով,

տնօրենի ժ/պ՝ **Ա. Ստեփանյան**

Կատարող՝ Իրավաբան Զ. Թամազյան, հեռ. (010) 44-11-36